ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն, ազգանունը.**

Հրաչյա Ռոստոմյան,

Արկադի Բալյան,

Արման Մկրտչյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Արտակարգ իրավիճակների նախարար,

Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ,

ԱԻՆ աշխատակազմի արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչության արարողակարգի բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի սեպտեմբերի 24-ից 26-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարար Եվգենի Զինիչև:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության փրկարարական գերատեսչությունների միացյալ Խորհրդի գիտատեխնիկական 4-րդ նստաշրջանին և Բելառուսի Հանրապետության ԱԻՆ, Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության արտակարգ իրավիճակների նախարարության Կոլեգիայի 6-րդ համատեղ նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

Քննարկվեցին Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության փրկարարական գերատեսչությունների Միացյալ Խորհրդի գիտատեխնիկական 4-րդ նստաշրջանի օրակարգով /2-րդ, 3-րդ և 4 րդ Կետեր/ նախատեսված հետևյալ հարցերը.

«Հրդեհային անվտանգության և հրդեհաշիջման ապահովման միջոցներին ներկայացվող պահանջների մասին» Եվրասիական Տնտեսական Միության /ԵՏՄ/ տեխնիկական կանոնակարգի միջոցառումների ծրագրի գործողության մեջ մտնելու նախապատրաստական միջոցառումների

ծրագրի իրականացման ուղղությամբ: Տեխնիկական կանոնակարգի պահանջներն ապահովող միջպետական ստանդարտների մշակման ընթացքի վերաբերյալ:

Կյանքի ապահովության ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ծրագրերի քննարկում՝ նկատի ունենալով «Անվտանգ քաղաք» ծրագրի օրինակը:

Վերոնշյալ օրակարգային հարցերի առնչությամբ զեկույցներով հանդես է եկել ԱԻ նախարարի տեղակալ Արկադի Բալյանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2018 թվականի սեպտեմբերի 24-ից 26-ը Սանկտ Պետերբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում ԱԻ Նախարար Հրաչյա Ռոստոմյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարար Եվգենի Զինիչևի և Բելառուսի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարար Վլադիմիր Վաշչենկոյի հետ: Քննարկվել են արտակարգ իրավիճակների կանխարգելման,նրանց հետևանքների վերացմանն ուղղված հնարավորությունների և մեխանիզմների զարգացմանն ու հզորացմանն, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության խթանմանն, բնակչության պաշտպանվածության մակարդակի բարձրացմանն առնչվող, ինպես նաև արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ երկկողմ համագործակցության խորացմանն ուղղված այլ հարցեր:

ՌԴ ԱԻ Նախարար Եվգենի Զինիչևի և ԱԻ Նախարար Հրաչյա Ռոստոմյանի միջև կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնի գործունեության ապահովման ուղղությամբ համատեղ իրականացված քայլերը՝ արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանն անհետաձգելի մարդասիրական օգնության ցուցաբերման, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում մասնագետների ուսուցանման և որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքներում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ընդունվել և հաստատվել են Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության փրկարարական գերատեսչությունների Միացյալ Խորհրդի գիտատեխնիկական 4-րդ նստաշրջանի և Բելառուսի Հանրապետության ԱԻՆ, Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Ռուսաստանի

Դաշնության ԱԻՆ Կոլեգիայի 6-րդ համատեղ նիստի օրակարգային բոլոր հարցերը /համատեղ նիստին ԱԻՆ պատվիրակությունը մասնակցել է որպես դիտորդ/:

Հանդիպումների ընթացքում ստորագրվել են հետևյալ փաստաթղթերը.

- Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության փրկարարական գերատեսչությունների Միացյալ Խորհրդի գիտատեխնիկական 4-րդ նստաշրջանի Որոշումը՝ ԱԻՆ պատվիրակության կողմից ստորագրել է ԱԻ Նախարարի տեղակալ Արկադի Բալյանը /առդիր կցվում է/:
- Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Ղազախստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների գերատեսչությունների ղեկավարների կողմից ստորագրվել և Բելառուսի Հանրապետության ԱԻՆ, Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության ԱԻՆ Կոլեգիայի 6-րդ համատեղ նիստի Արձանագրությունը և 2019թ. Աշխատանքային ծրագիրը, ԱԻՆ պատվիրակությունը մասնակցել է որպես դիտորդ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց շարունակել տարածաշրջանային համագործակցությունը արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացման բնագավառում համատեղ ծրագրերի, առաջարկությունների շրջանակներում, մշակել նոր ռազմավարական ուղիներ, շարունակել աշխատանքները ՌԴ ուսումնական հաստատություններում արտակարգ իրավիճակների բնագավառում կադրերի վերապատրաստման և փորձի փոխանակման ուղղությամբ: Վերահաստատվել է հայ-ռուսական սերտ համագործակցության պատրաստակամությունը՝ կառուցված արտակարգ իրավիճակների բնագավառում փոխշահավետ հարաբերությունների հիման վրա:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

27.09.2018թ.

Հրաչյա Ռոստոմյան _____

Արկադի Բալյան _____

Արման Մկրտչյան _____